

ՕաննաՀԱՐՈՅԱՆ

ԿԱԹՆԵՂԵՆ ՈՒՏԵՍԾԸ ՇԻՐԱԿՈՒՄ ԽԽ ԴԱՐԻ Բ ԿԵՍԻՆ

Յուրաքանչյուր ժողովրդի կենսապահովման համակարգում կարևորագույն տեղ է գրավում ուժեատը, որը կազմում է մարդու առաջին, անհրաժեշտ և ամենօրյա պահանջմունքը: Ազգային ավանդական ուժեատի համակարգը ձևավորվել է դեռևս վաղնջական ժամանակներում և կրում է հայոց հիմնական տնտեսական գրաղմունքների՝ երկրագործության և անասնապահության ազդեցությունը:

Հայոց ավանդական սննդի համակարգում տեսակարար մեծ կշիռ ուներ կարնամքերի օգտագործումը: Ընդունված էր որպես ձմռան պաշար մսի, այլուրի, կարտոֆիլի և այլնի հետ զուգահեռ մբերել նաև կարնաքքվային մբերքներ: Ամենատարածվածը մածուն էր, որը մերում էին ինքնամերմամբ գոյացած մերանով¹: Սածնից պատրաստում էին տարատեսակ ուտելիքներ, սպաս, ապուր և այլն:

Հայոց կարնատնտեսության առանձնահատկություններից էր կաթի աճրափոն մշակումը, երբ արդյունքում ստացված բոլոր մբերքները ևս գործածվում էին սննդի մեջ՝ ենթարկվելով երկրորդային մշակման: Հայ տանտիկինները մեծ վարպետությամբ կարողանում էին պատրաստել մածուն, քամած մածուն, չորքան, կարնաշոռ, կաթի սեր, կարագ²: Շիրակում լայն տարածում ունեին կարնամքերքով պատրաստվող կերակուրները, որոնցից շատերը ներկայումս հազվադեպ են պատրաստվում, ինչայսիք են դրումով, բրնձով կարով ճաշը, ճափարով կարով ճաշը, սիրեխով կարով ճաշը, չորքանը և այլն: Իսահակյան զյուդում կաթի շիճուկով կարնաշոռ էին հանում, որին ավելացնում էին եռացրած կարը և շաղախում: Վերջում լցնում էին առանձին ամանների մեջ և առավոտները խնում որպես նախաճաշի բաղկացուցիչ նաև:

Կաթնեղեն կերակուրների մեջ առանձնանում է կաթնով կամ կաթով ապուրը, որը պատրաստում էին բրնձով ու շաքարավազով: Երբ կերակուրը եփվում էր, այն լցնում էին առանձին ամանների (քաս) մեջ, վրան թանզիկ քաշում, բողնում, որ սառչեր, հետո նոր ուտում էին: Կաթնովի վրա սեր էր բռնում, ինչը կերակուրն ավելի ցանկալի ու գրավիչ էր դարձնում: Այժմ կաթնովին ավելացնում են նաև դարչին, որը յուրահատուկ համ ու հոն է տախին կերակրին: Ընդգծենք, որ այն որպես ավանդական կերակուր, մեր օրերում այնքան էլ տարածում չունի: Ըստ հակարված նյութերի՝ այժմ կարնովը սոցիալապես ապահովված ընտանիքներում գորեք չի պատրաստվում, իսկ տնտեսապես վատ պայմաններ ունեցողներն էլ դժվարանում են այն պատրաստել: Մածունի փոխարեն շատ են օգտագործել չորքանը, որից պատրաստված ճաշին նաև քյալազյոշ են անվանել³: Խնոցին հարել են, քանը հավաքել, լցրել մեծ ամանի մեջ, բողել, որ բրվի: Եփելուց հետո քանել են, առանձին ամանների մեջ լցրել: Ստացված մածունից պատրաստել են փոքր գնդիկներ, շարել, որ չորանա (չոր քան): Երբ այն պատրաստ է եղել, պահել են ձմեռվա պաշար: Չորքանից ապուր են պատրաստել, և որպես քան օգտագործել, ճաշերի վրա ավելացրել: Մարալիկում պանրի լոռով գնդիկներ են պատրաստել, չորացրել, օգտագործելու ժամանակ քրջել են ջրով կամ կաթով, ավելացրել տապակած կարտոֆիլի, ճափարով ստխով փլավի վրա ու կերել: Հիմա չորքանը դուրս է եկել գործածությունից, քանի որ ներկայիս սերունդը մոռացել է պատ-

¹ Տե՛ս Հայկական խոհանոց, Եր., 1963, էջ 29:

² Ո. Ծառուրյան, Հայոց ավանդական տոմսական ուժեատը, Եր., 2011, էջ 16:

³ Օ. Հարոյան, Դաշտային ազգագրական հյուրեր /այսուհետ՝ ԴԱՆ/, զյուղ Զորի Սարիար, Լեռնազյուղ, 2011, տեսոր 2:

բաստման եղանակը, իսկ ովեր հիշում են, նշում են, որ չորբանի պատրաստումը մեծ հմտություն է պահանջում: Մածունը իմաս ևս անպակաս է զյուղացու տանից: Արան զուգահեռ օգտագործելում են գործարանային արտադրության մածնատեակները: Առողջարար է համարվում հատկապես «Նարին» մածունը: Վերջինս կարևոր բուժական հատկություն ունի աղեստամքային հիվանդությունների դեպքում: Ընդունված էր ուտելիս մածնի մեջ նաև մորաքա (հատկապես կեռաս) կամ շամիչ լցնել: Այս սովորությունը պահպանվում է նաև մեր օրերում: Կարելի է օգտագործել նաև քամած մածունը: Գրեթե նույն ձևով զյումրեցիններից ոնանք պատրաստել են «զուրբիան»: Այն քամած մածնի, շամիչի, մեղրի, նաև ընկույզի համաստեղ զանգված է⁴:

Տարածված ավանդական կերակրատեսակներից էր կարտոֆիլով կարով պյուրեն, որը պատրաստել են հետևյալ կերպ. կարտոֆիլը մաքրել են, կտրատել ու կաթով եփել: Երբ կարը եփվելով պակասել է, կարտոֆիլն անմիջապես տրորել են, աղ լցրել, կարագ դրել և կերել: Զնորան ամիսներին շատ են օգտագործել ծավարով և փոխներով խաշիլ, որոնք կերել են հիմնականում կարով: Խաշիլ լցնում էին մեծ ամանների մեջ, մեջտեղը յուղ դնում, իսկ կողքերից կար լցնում և ուտում: Մածուն օգտագործում էին հիմնականում երեկոյան, որպեսզի հաճգիւտ քննեին, ինչպես նաև ավելացնում էին ծավարով տողմայի վրա (զյուղ Ցողամարզ), իսկ Կրասարում տողման ընդունված էր ուտել սոխուտածով: Կարը կերել են նաև բրդած: Ցողամարզցինները խնկոշը և պատրաստում էին կարով (սովորական փոխներով գնդիկները): Զնորան միքված կերակրություններից էին չորբանով ճաշը (քյալազոյշ), քանով սպասը կամ ապուրը, որը Լեռնազուրում պատրաստում էին ցորենով, եփում էին բռնիրում՝ կավե պուտուկներում: Լենինականում սպասը պատրաստել են նաև նուան հատիկներով: Սպասը եփելուց հետո ավելացնում էին նախապես մաքրված նուան հատիկները (ըստ ապուրի շափի՝ ավելացնում էին մեկ կամ երկու նուան): Ընդունված էր սպասը պատրաստել նաև բազուկով կամ դմիով:

Գյուղերում սովորություն է եղել ճմեռվա պաշար հավաքելու համար կարով խար ու խազ անել: Հավաքվում էին մի քանի ընտանիքներ, որոշում հերթականությունը, կարի շափր և ըստ հերթի՝ վերցնում իրենց հասանելիք կարը: Ներկայում խար ու խազ անում են հիմնականում սոցիալապես անապահով զյուղացինները, հատկապես եթե անասունների զիսաքանակը քիչ է (2-3 կով), որպեսզի կարողանան ճմեռվա համար յուղ ու պանիր պատրաստել: Ունենոր զյուղացինները կարը հիմնականում տախս են գործարանին: Մեքենան ամեն օր գալիս է, կարը հավաքում: Տանտիկինները կարից ստանում են տարրեր մթերքներ՝ պանիր, չորքան, մածուն, կարագ, հումսեր:

Հայոց ուտեստի մշակույթում հացին զուգահեռ առանցքային դեր էր վերապահված նաև պանիրն, ինչի մասին վկայում են քազմաքիլ ժողովրդական ասացվածքներ՝ «Հաց ու պանիր, կեր ու բանիր», «Պանիր հաց՝ սիրտդ բաց»: Մեղանին հաց ու պանիրի առկայությունը նվազագույն անհրաժեշտ սնունդն էր: Պանիր պատրաստում էին կովի, ոչխարի, այծի կարից: Պատրաստում էին պանիրի տարրեր տեսակներ՝ չեշիլ, լոռ, մոքալ (հորած անքաշ պանիրն էր, որը կտրտած լցնում էին կարասի մեջ (Կրասար), ճիլի (Լեռնակերտ), ճիլ (Հառիճ, Փարոս), հուսակ (Փոքր Մանթաշ): Իսահակյանում չեշիլ ոչխարի տիկերում են դրել, որը նախապես աղել են, դրել բանկաների կամ կավե պուտուկների մեջ: Դրանք բարս էին դարձնում, բայց բերանը մի քիչ թեր, որպեսզի շիճուկը թափվեր: Հետևաբար պանիրը շատ համեղ էր ստացվում: Այստեղ անքաշ պանիրը քիչ են օգտագործել: Մինչև այժմ էլ հատուկ պահանջարկ ունի չեշիլ պանիրը

⁴ Օ. Հարոյան, ԴԱՆ, թ. Գյուղմիջ, 2012, Տեսոր 1:

(կանաչ): Ընդունված է ձմռան համար այն պահել կճուծներում, քերանը փակել, որ լավ կանաչի: Պահության պատրաստում են նաև պանրիսաշ՝ գլուխ սոխով, լավաշով:

Չավախիքում ընդունված էր պատրաստել կաթով, ձավարով, բարմ կաղամբով ճաշ: Կաղամբն սկզբում շոգեխաշել են սոխեռածի հետ, ապա ավելացրել ձավարը, հետո առատ կաթ՝ այնքան, որ կաղամբը ծածկվի, ու եփել են: Այսուել բանջարը ևս ընդունված էր եփել կաթով: Լայն տարածում ուներ նաև կտրած ապուրը: Թաթար բորբոքում խմորը («շաղվար») էին ծվով ու կաթով կտրտում էին ինչպես երիշտան: Սկզբից բանի էին եփում (կամ մածունը), ապա կտրտած խմորը յուղի մեջ տապակում էին («ժարիտ» անում) ու լցնում եփած բանի մեջ: Վերջում ավելացնում էին «սոխառած»՝ սոխեռած ու համեմ: Բաշզյուղում լայն տարածում ուներ կաթով տակով ապուրը (ճակնդեղ): Սիրված ու տարածված կերակուրներից էր նաև բանով սպասը: Այն հիմնականում պատրաստում էին բանով, իսկ վերջինին բացակայության դեպքում՝ նաև մածոնվ, չորթանով, երբեմն էլ թթվասերով⁵: Նոր ծնած կովի կարից դալ էին պատրաստում: Այն բնակչության կողմից սիրված և սպասված ուտելիք է համարվում, որը կարող են վայելել տարին մեկ անգամ: Ինչպես պատմում է բանասաց Ցողիկ Նավոյանը, դայի պատրաստումը մեծ վարպետություն է պահանջում: Հավաքում են նոր ծնած կովի Յ «ժում» անգամվա կաթը, որին ավելացնում են խիժ, լավ խառնում և դնում բռնիքը՝ եփվելու: Միան նաև բրինձ (10-15 հատ) են ավելացրել, որ ծակոտիմեր ունենա: Լավ եփվելուց հետո կարը դառնում էր դալ, առանձնանում էր շիճուկը: Դալն այսօր էլ ուտում են շաբարավագով կամ առանց դրա: Ընդունված է բաժին հանել բարեկամ - դրկիցներին⁶:

Կարից պատրաստված կերակուրները մեր օրերում ևս մեծ պահանջարկ ունեն: Չնայած որոշ կերակուրներ՝ կաթով պյուրեն, կաթով ձավարով ճաշը, չորթանը և այլն ներկայումս գրեթե դուրս են եկել գրծածությունից, այնուամենայնիվ կարնեղենը այսօր էլ կազմում է շիրակցիների սննդակարգի հիմնական բաղադրիչը:

МОЛОЧНАЯ ПИЩА ШИРАКА ВО ВТОРОЙ ПОЛОВИНЕ 20-ГО ВЕКА

Резюме

O. Ароян

В данной статье подробно описаны особенности приготовления пиши из молочно-кислых продуктов на территории Ширакского региона во второй половине 20 века. Хотя некоторые кушанья в настоящее время вышли из перечня блюда, например молочное пюре, тыквенно-молочное блюдо, а приготовление других сводится к минимуму, Ширакский регион выделяется употреблением еды на молочной основе, славится особым приготовлением сыров и такой их разновидностью, как сыр “чечил”.

⁵ O. Հարոյան, ԴԱՆ, գյուղ Կտորնութ, 2010, Տեսոր 2:

⁶ Նույնը: